թեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Բարդուղիմէոս թրագու յիշխեսցես 'ի վերայ ամենայն կերակրոց 'ի յերեսս երկրին հայաստանեաց, յորդորելով զի վարելով ցանիցեն ամենայն դաշտ յերեսս երկրի, զի մի մնասցէ դատարկ քայլ մի և ով ոք որ կաղանայցէ վարելոյ և ցանելոյ զոր ինչ պատճառի որ իցէ՝ ազդ արասցես իշխան աշխարհին յայնմիկ, զի Օգնական նմայ լինիցի և ցանք նոցա կատար հասանիցէ, և եթէ արգելում մի ծայրագոյն գտցիս ազդ մեզ արայ, ամենայն պտղոյ, ցորենոյ, գինոյ, ձիթոյ և զոր ինչ կերակրոց բաժինն տանն հայոց ըստ Օրինաց գթածութեամբ հաւաքէ 'ի շտեմարանն տանն հայոց և յինն հանէ և յանձնէ իշխան յաշխարհին յայնմիկ, զի նայ վաճառելով գինն նորայ մուծանէ ընդ գանձարանն հայոց, պատուիրեմք քեզ Տեառն բարդուղիմէոսիդ զգոյշ լեր զի տարեկան կերակուրն բնակողաց յաշխարհին մերոյ մնասցէ անարատ 'ի շտեմարանի չոր և յատակ, և 'ի միջի ամրոցի ապահով, որում աշխարհի որ իցէ, և ունիս իշխանութիւն որոնել 'ի տանէն հայոց աշխարհագիրն յիմանալ դու թիւ ժողովրդեան հայոց, և թիւ արկանել տարեկան կերակուրն 'ի վերայ բոլոր ժողովրդեան, որ հարկաւոր է ամենայն միոյ անձանց ունիլ քեզ կերակուր 'ի շտեմարանս վասն միոյ անձի երիս բեռն ցորեան նոյն թուաւ հաւաքել 'ի միջէ ամենայն գաւառաց, և ամրափակէ